# ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

## ՇԱԲԱԹԱԿԱՆ

30 ՓԱՐԱ ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱ 30

ՍՈՒՐՀԱՆԴԱԿի իւրաքանչիւր շրջանը 52 օրինակ է։ Շրջանին գինն է Պոլսոյ համար 40 ղահեկան, կանխիկ։ Կիսաշրջանը՝ 26 թերթ 20 ղահեկան։ Հատը 30 փարայ։ Գաւառաց համար շրջանին գինն է թղթատարի ծախքով 48, կիսաշրջանը 26 ղահեկան։

Ծանուցման տողը 2 ղահեկան։ Անվճար նամակ չ'ընդունիր։ Չի հրատարակուած գրութիւնք ետ չեն տրուիր։ Նամակ եւ գրութիւնք ուղղել՝

առ Տիրան Գ. Փափազեան Կ. Պոլիս
Պապը Ա'լի ճատտէսի Թիթուպհանէլի [illegible] թիւ 62

ԹԻՒ 9 Գ. ՏԱՐԻ 1888 ՇԱԲԱԹ 20 ՕԳՈՍՏՈՍ



ملكی احیا ایلدك روز جلوسندن برو
لیلهٔ عیده بدلدر بو شب بهجت افزا
اولدی مستغرق جهان نور سروره سرتسر
شوكت واجلال ایله عبدالحمید خان چوق یشا

ԹԷՊՐԻՔԻ ՃԻԻԼՈՒՍԸ ՄԷՅՄԷՆԷԹ ՄԷ'ՆՈՒՍ

ՀԱԶՐԷԹԻ ՇԷՀՐԻԵԱՐԻ

Մուլքի էհեա իյլէտին րուզը ճիւլիւ-
սընտան պէրու,
Լէյլէի ըյտէ պէտել տիր պու շէպ
պէհճէթ էֆզա.
Օլտու միւսթաղրագ ճիհան նուրի
սուրուրէ սէրթէսէր,
Շէվքէթու իճլալ իլէ Աբտիւլ Համիտ
Խան չոգ եաշա :

## ԺԲ. ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
## ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ
## ՀԱՄԻՏ Բ.

### ԿԱՅՍԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ

Մեր Օգոստափառ և սիրեցեալ Վեհապետին երջանկաբեր գահակալութեան տարեդարձին առթիւ, որ երէկ անպատում ցնծութեամբ տօնուեցաւ ընդ ամենայն կողմանս Թուրքիոյ, խորին երախտագիտութեան պարտք կը համարինք մեր խոնարհ մաղթանքներն եւ կցել այն ջերմագին բարեմաղթութեանց զորս համայն ժողովրդեան միլիոնաւոր բերաններն նորէն առիթ ունեցան'ի վեր ուղղելու առ Ամենակալն Աստուած, վասն երկարութեան անգին կենաց մեր Օգոստափառ Ինքնակալին. Որոյ գահակալութիւնն լուսոյ և խաղաղութեան դարագլուխ մ'եղած է երկրին և ժողովրդեան համար։

Ն. Կ. Վեհափառութեան առ ժողովուրդն տածած հայրախնամ սէրն և Իւր բարեխնամ կառավարութեան յօգուտ երկրին բարգաւաճման ըրած արդիւնաշատ տնօրէնութիւնք ամեն օր երախտագիտական նորանոր զգացմամբք կլնուն ժողովրդեան սրտէն շնորհապարտ սրտերն, որ այս երջանիկ առթիւ, երէկ երախտագիտութեան ինքնայօրդոր հոյակապ ցոյց մ'ըրաւ, ասպարէզ տալով իւր շնորհապարտ զեղուն զգացմանց. ընծայլինս կրկնելով, ԿԵՑՑԷ՛ ՄԻՇՏ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՒԼ—ՀԱՄԻՏ ԽԱՆ, որոյ ընդ հովանեաւ ջերմագին կը բաղձայ և կը յուսայ յամենայն ամս վայելել խաղաղութիւն և անդորրութիւն.

# ԱԶԳԱՅԻՆ

## ՇԻՆՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

### ՀԱՆԴԷՍ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի օրը Ազգ. Հիւանդանոցի շինութեան ըսկըզբնաւորութեան հանդէսը կատարուեցաւ Ճէտի-Գուլէ ի ներկայութեան բարձրաստիճան եկեղեցական հարց, վարդապետաց, քահանայից և ազգ. պաշտօնատարաց ոմանց։

Հանդէսն սկսաւ ի ժամ 4. երկու հազարէն աւելի երկսեռ ազգայնոց բազմութիւն մը լցուած էր Հիւանդանոցի պարտէզն։ Խիստ սրտաշարժ էր հանդիսին սկզբնաւորութիւնը. Որբանոցի դպիր մանկունք "Նշանաւ"ն երգեցին, հոգեւորական դասն երգից "Էջ միածինն ի Հօրէ" և ապա հանդիսին նախագահ Վեհափառն Սրբազան բրիչ ի ձեռին առնելով առաջին անգամ սկսաւ բրել. և այսպէս կարգաւ Ս. Հայրիկ, Տեղապահ Սրբազանը, բոլոր եպիսկոպոսք, վարդապետք և քահանայք կարգաւ, Պատ. Հոգաբարձութեան անդամք, ճարտարապետ Պետրոս Էֆ. Նէմցէ. և այլ ներկայ գտնուող նշանաւոր ազգայինք։

Ամեն մէկ բրչի հարուածին ժողովրդեան ցնծագին աղաղակն ու կեցցէներու շռինդը անագին որոտում կը հանէր։

Այս արարողութենէն ետքը Վեհափառն Սրբազան խօսեցաւ ըստ պատշաճի համառօտ քարոզ մը. և օրհնելով Ազգն առհասարակ, մաղթանք ըրաւ Օգոստափառ Սուլթանին թանկագին կենաց, իւր լուսամիտ նախարարաց համար, յիշեցուց թէ ինչպէս որ Ազգն մինչև ցայսօր Հիւանդանոցի ճակատն ունեցաւ Սուլթան Մահմուտի անունը, նոյնպէս պիտի բախտաւորի այսուհետև անոր թոռան՝ մեր Վեհափառ կայսեր Սուլթան Համիտի անունը նշանակել նոր Հիւանդանոցի, այդ գթութեան յարկի ճակատը, մեր կայսր, ուրկէ ամեն գթութիւն կը բղխի։

Երբ այս ամենը աւարտեցաւ, հանդիսականք եկան Հիւանդանոցի հիւրանոցն, ուր պէտք եղած մեծարանքներ մատուցուեցան։ Անդ Ազգ. Ժողովոյ Ատեն. Ալեքսանդր Տօքթ. Թիրեաքեան էֆէնտի յանուն Երեսփոխանական ժողովոյ շնորհակալութիւն մատոյց Պատուարժան Հոգաբարձութեան այն անձանձիր խնամոց համար զոր նոյն պաշտօնէութիւնն ունի Սիրոյ և Գթութեան յարկոյ համար. մաղթեց որ Ազգը քիչ անգամ բաղդ ունենայ ազգայիններ ղրկելու այն պատսպարանը։ Քանի մը վայրկեան լռութենէ ետքը՝ տխուր բանիւք ակնարկութիւն ըրաւ վաղամեռիկ կեանքի մը, ողբացեալ Սերովբէ էֆէնտի Կիւլպէնկեանի, որ "իր վերջին օրերն Ազգին բարերարութեան մատուցած էր". որոյ այժմ հոգին և պատկերը հանդիսին ներկայ էին և որոյ արժանաւոր շառաւիղները, Պարոն Կարապետ եւ Յովհաննէս էֆէնտիները, եւ իւր հարազատը Սարգիս էֆէնտի կը յաջորդեն ու անոր պարապը կը լնուն այսօր ազգին մէջ. եւ խնդրեց, թէ նորա օրհնեալ աճիւնը դէպ Աստուած ազգին մէջ յաւէտ զգալի չըլլայ այն դառնագին կորուստը շնորհիւ իւր սիրասուն զաւակաց։

Հիւանդանոցի պատուարժան Հոգաբարձութիւնը, ամեն արարողութիւն եւ հանդէս լրանալէն ետքն, իւր բոլոր անդամներով երեք ժամու չափ կարեւոր խնդիրներով զբաղեցաւ.

Ցոյց տալու համար այն պարոններուն թէ, ճշմարտութիւնը վառած ճրագի պէս չկրնար գըրուանի տակ դրուիլ, և թէ երկայնամիտ նման թերթեր ի զո՞ւր կը փորձեն այս անկարելիութիւնն ի գործ դնել իրենց համախոհաց խմբին համար, 'ի ստորև կը հրատարակենք հետեւեալ նամակն, որ ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ գերեզմանախուզութեան ինքնայօրինող խոստովանութեան մը վրայ։

Ճշմարտութիւնը միշտ ճշմարտութիւն է, որքան ալ անճշմարտասէրք ճգնին աքօղել զայն. և կուգայ ժամանակ որ հակառակասէրք անգամ ինքնայօրդող կը խոստովանին մոռնալով անցեալն, և այսպէս թէ իրենց և թէ իրենց համախոհներուն փոքրոգութիւն կը բերեն։

## ՈՂՋԱՄԻՏ ՀԱՅԵՐՈՒ

### ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

« Արեւելք լրագրոյ 1381 թուոյն մէջ, կարդացինք Արմաշու Վանահօր ինքնագիր մի նամակի այն տողերն. — «Մեր յիշատակի երախտեաց երանելւոյն «Պօղոսի Եպիսկոպոսի» յորդորեաց զիս բանալ զգերեզմանն ամենայն երկիւղածութեամբ ժողովել գնչխարս մարմնոյն, մինչև զմանր մասունս խաղալեաց մատանցն և ոտից և բովանդակ իրանին, զետեղել յարկեղ մի ուռև չերմուն և արձանական վիմօքս հանդերձ ՓՈԽԱԴՐԵԼ ինեւքս ի տաճարին առ երի հրաշագործ պատկերի Ս. Աստուածածնի, որպէս էրն յառաջ ի հին տաճարին» — Եւ կարդալէ զկնի զարմանօք պաշարեցանք թէ ի՞նչ էր ուրեմըն մի քանի նախանձոտ եկեղեցականաց (Բոժոժիկ.— Վրանին բարի,) կրաքանցումն Իզմիրի մի քանի մասնաւոր գերեզմանաց փոխադրութեան մասին, և ի՞նչ էր Պատրիարքարանի բռնած ընթացքն, որ առիթ տուաւ Ամեն. Մուրատեանց Սրբազանի վշտանալուն և միճակէն հեռանալուն. Նա մանաւանդ կը տեսնենք թէ Արմաշու գերեզմանի փոխադրութիւնն Իզմիրի գերեզմանաց փոխադրութենէն շատ տարիներ յառաջ կատարուած է։

*« Արդարեւ այս դէպքերն մեծ նախատինք են այն եկեղեցականաց, որոնք միշտ երկու երես և երկու մեկնութիւն ունին նշանաւոր խնդրոց նկատմամբ, օրինակի աղագաւ, երբ ուզեն՝ գերեզմաններն փոխադրական կը վարդապետեն և երբ ուզեն՝ կը հրատարակեն թէ անշարժ են գերեզմանք և անփոփոխ։»*

Գրիգոր Ց. Քէօրքճեան

Բոժոժիկ. — Այս նամակին պատասխանը փունջի քառորդ դարեան անաչառ և ճշմարտասէր խմբագրէն կ'ըսպասենք, որ քառորդ դարեան խմբագրականաւ մը անշուշտ պիտի յօժարի բաղդել այս անիրաւութեան դէմ, եթէ սակայն կանխաւ զինքը յօժարեցնեն Մալխասյի... խավունները։

## ՀՐԱԺԱՐԱԳԻՐ ԲՈԺՈԺԻԿԻ

Տիար Բոժոժիկ, որ բաւական տարիներէ ի վեր դժոխքէն փախչելով մեր քով ծառայութեան մտած է, անցեալ օր սանդարամետին կողմանէ իրեն եղած կշտամբանաց՚ի պատասխանի, հետևեալ մեղայագիրը պատրաստած է, որ քիչ օրէն հրեղէն սուրհանդակաւ պիտի ղրկուի առ Սադայելապետն։

### ՊԱՏՃԷՆ

Ես արդ զթմրեալ զգայութիւնս ըղեղային ի գործ ելեալ, զվրիպեցուցականն ՚ի կանոնաց սադայելիդ ահեղասաստ վճռայն, թէ յորժամ իբրեւ մարդ սխալական բանիցդ սադայելապետութեանդ ոչ անսասեմք՝ անկանիցիմք ՚ի դեհեննն ընդունելով զանէծս արժանահատոյց զանաթեմայս, եւ զգլխի վայր կախուիլս յատոյ ծառոց եղեւնեաց որպէս գնետահար պլլպըրճըկըն, զեագլը քէպապն և իւր բիլավն։

Մեղա՜յ, ոչ լինելոյս խստամբերս դառնամորմոք ծնունդ իժիցդ, դառնապէս մեղայ.

Մեղա՜յ կոկորդիլոսին անվրէպ անախտորապէտն, սաստկապէս մեղայ։ Մեղա՜յ օտապաշխին օթևանից հօրն սադայելի, զի մի՛ արտաքս ընկեսցես զիս, ո՛հ, ո՞րպէս սխալեցայ.

Մեղա՜յ անդէն և անդէն զգլուխ վերուցեալ ընդդէմ պատգամախօսիս պնակալեզապայծառացեալ ճեմականացդ, գլխի վայր մեղայ.

Այս է դրուագ պաղատանաց ողջագումար Բոժոժիկեան խմբիս եղկելւոյս ՚ի դիւերասաուերն ձմեռնայնոյն ճենճերի, յորոց ամենք միամիտս զօլով որսացեալքն որպէս զեղն պարարակ, զի ամե և կշտամբանք իւր, ամե և սանդարամետք իւր, ամե և դեղեցիկ գործքն իւր, ամե և չամանթուրան իւր, ամե և հասար գլուխ իւր, ամե և խառախուլախի թեթեւութիւն իւր, հալոյն և դարբին իւր, կաթսայապետն և սկրամոլս իւր, առնախտարապետն և գախուռն իւր, ախոռապետն եւ զանասունս իւր, խոխոբապետն և զմօրմօռօզս իւր, բաղաամն և զաւանակ իւր.

Ո՛հ, զի՞րդ վրէժ դարաւոր յանցանաց կարացից քամել առ ի սաստկութենէ յանցանաց դատապարտութեան, զի ոչ զսիւրի սինէքվարի յանձնառականդ կատարեմք և ոչ գցնդեալ խելապատկիդ հրաւէրն ընդունիմք։ Ապաքէն դժբաղդ է ինձ լինիլ կաւ սխալելի, զերի սպանդարապետի, սառուցեալ ջուր ովկիանու, դի անկենդան և խոսուն մեռեալ, զի ընդ գերութեան դժոխմբեր յուծիդ չոչ համբերեցից.

Արդ ընկա՛լ զհրաժարականս իմ և մի խռովեր զհանգիստ իմ, զի մի՛ ոտքս կաշկանդեսցի, մի՛ ձեռքս քաշեսցի, մի՛ բերանն իմ պապանձեսցի, մի՛ լեզու իմ որդնոտեսցի, այլ խոստովանիմ և հաւատամ թէ դու եռահամագոյակից անեւութիւն որ կայ ՚ի միջի երկնի և երկրի յաւիտեանս յաւիտենից ամէն.

# ՇԱՀԱԻՈՐ ԱԶԴ

Սահուն ոճ ունեցող բանաստեղծ մը կը փընտռուի, որ Նոր Պուէտի մը յօրինած գրքոյկը երկայնասփինակի միջոցաւ զովաբանէ, և ի վարձատրութիւն այսպիսի ծառայութեան՝ նոյն գրքէն հինգ օրինակ նուէր պիտի ընդունի. ուստի ջերմապէս կը յանձնարարենք գրագիտաց որ սանկ *** մը ձեռքէ չի փախցնեն։ Գրքին պարունակութեանը վրայ գաղափար մը առնել ուզողք ուղղակի դիմելու են առ հեղինակ պուէտն, որ իր երկը ծայրէ ի ծայր գոց ըրած՝ դէմը եկողին կ'սկսի թութակի պէս կարդալ, որով շատերը կազատէ առանձինն կարդալու ձանձրութենէն։

Կը գտնուի մերթ ի փողոցս, ի գրատունս, ի չարշիս և կամ վերջապէս ամեն ըլլայ եկած տեղուանքը։

Հինգշաբթի օրը Վառնայի շոգենաւով մայրաքաղաք եկող հրեայ մը, որ բաւական մարգարիտով բեռնաւորեալ ամենայն անխռովութեամբ Ղալաթիոյ մեծ պողոտայէն կանցնէր, ոստիկանութեան կողմանէ կարգեալ ծածուկ պաշտօնեայներէն մէկուն միջոցաւ օձիքը միանգամայն ծոցները

ձեռք տուաւ, ուր պահուած մարգարիտները մաքսատուն տարուելով ըստ օրինի հարիւրին 8 հաշուով վեց պատիկ մաքս այսինքն հարիւրին 48 տուժելէ ետքը, քակուած բաշխները կարել տալու համար Թէրզիի մը խանութ մտաւ.

Բոժ. Աստուած համբերութիւն պարգևեսցէ:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

( Շար. և վէրջ. տե՛ս Թի. 7 )

150 Աշակերտուհեաց տրուելիք մրցանակներն:

20 Աղջկանց մէկ մէկ մատնոց, որք Ասեղնագործ պիտի լինին՝ եղբայրը քսակ մը անգամ չինել չի կարողացող:

10 Աղջկանց մէկ մէկ վրձին, որք Ճարտարուեստ պիտի լինին՝ դիմագծութեան մէջ:

10 Աղջկանց մէկ մէկ թօփ թուղթ, որք Բանաստեղծ պիտի լինին՝ սիրահարական նամակներ խըմբագրելով.

20 Աղջկանց դրամով լի քսակներ, որք Տնտեսագէտ պիտի լինին՝ 5 փարայի արժէք ունեցող մէկ բանին 40 փարայ տալով.

20 Աղջկանց մէկ մէկ զոյգ երկաթէ կօշիկ, որք Տանտիկին պիտի լինին՝ ոտքերնին գետինը զարնելով տունը տակնու վրայ ընելու համար:

10 Աղջկանց մէկ մէկ արմոնիկ, որք Երաժիշտ պիտի լինին՝ անպատկառ եղանակներ երգելով.

20 Աղջկանց մէկ մէկ տուփ օրգան-կարմիր, որք Գծագրիչ պիտի լինին՝ իրենց դէմքը գծող:

10 Աղջկանց մէկ մէկ թօմպախ մասնի, որք պիտի լինին Թուաբան՝ մատով համրելու մէջ.

10 Աղջկանց մէկ մէկ մինտայ, որք Ճարտասան պիտի ըլլան՝ սիրեմ բայը խոնարհելու մէջ:

20 Աղջկանց մէկ մէկ Դիմակ, որք Տրամաբան պիտի ըլլան՝ ծուլութիւնը պաշտպանելու մէջ:

Գումար 150:

Դարձեալ կը կրկնենք թէ՝ այս կարգի աշակերտուհեաց վերոյիշեալ մրցանակներուն տեղ ոսկեզօծեալ գրքեր բաժնելը, պարզապէս անոնց քթին խնդալ ըսել է: Պ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հետեւեալը, որ ի նպաստ Ազգ. վարժարանի մը գիշերով ցերեկով տրուած դաշտային հանդիսի մը նեթագրական հաշուեցոյցն է, արժանի է ուշադրութեան:

ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Մուտքէ հաւաքեալ . . . . . . . | Դհկն. | 1400 |
| Պիւֆէէն . . . . . . . . . . . . | ,, | 3200 |
| Մեծ փիշէնկի մը համար աճելէ թէրթիպ հրջագայած թասախին արդիւնքը . . | ,, | 500 |
| Գումար | | 5100 |

ԵԼՔ

| | | |
|---|---|---|
| Ընդհանուր ծախք, զոխ և գդիչեր . | Դհկն. | 3000 |
| Ըմպելաբանութեան վրայ արտասանուած ճառին համար Պիւֆէէն Պախշիշլիէ . | ,, | 200 |
| Կախ հանել ուղղ գինեմոլի մը բերանը գացողներուն բաշխեալ ըմպելիք . . . | ,, | 300 |
| Հիւրամեծարողաց ըմպելիք . . . . | ,, | 500 |
| Ասդին անդին վաղվատող կանանցոց հերարէմը կտրելու համար Տօնտուրմա . | ,, | 300 |
| Աչալուրջ կառօններուն օրական և ըմպելիք | ,, | 400 |
| Սնտուկը պատրաստ դրամ . . . . . | ,, | 500 |
| Գումար | | 5100 |

Վասն ճշդութեան հաշւոյս կ'ստորագրեմք

Ծ. Կ  Ք. Մ. Ջ

Սէյիր ընողեան  Լափութաեան

Ինչպէս կը տեսնուի այս հաշուեցոյցէն, թէ հաւաքեալ 5100 դահեկանէն հազիւ հինգ հարիւրը կրցեր է երթալ սնտուկը մտնել, և կըսուի թէ՝ եթէ վիճակահանութիւնը օգնութեան չի հասնէր՝ թերևս այդ հինգ հարիւրն ալ դուրսը մնար, շնորհիւ Տէր դաֆատան պիրէր սէս չըդար ջգօմանտայութեան:

Բոժ.— Ուստի միաբերան աղաղակեցէք՝ Աստուած ընդունելի արասցէ:

Հանդիսին նկարագիրը յաջորդ թերթով:

## ԽԵՂԱՆԴԱՄ ՄՈՒՐԱՑԻԿՆԵՐ

Խեղանդամ մուրացիկներու մեծագոյն մասը, իրենց այս ախտերը կեղծելէ զատ՝ նա մանաւանդ յաճախ կը փորձեն զանոնք չափազանցել, դնելով զանոնք 'ի տես հասարակութեան:

Կը ճանչնամ փոքրիկ սապատող մը, որ իւր սրնգացը վրայ նստելու և ծալլուելու այնքա՛ն ճարպիկ ձև մը ունէր, զոր տեսնողը անշուշտ պիտի հաւատար թէ առանց սրունքի մարդ մէ:

Երբ կը տեսնէք մուրացկան մը, որ ցոյց կու տայ իւր երկու խեղանդամները, գիտցէք թէ այդ երկու ախտերէն մին կեղծ է։

Տասը խեղանդամներէն գրեթէ ինն այսպէս են.

Օրինակի համար, ձեռնասուն մը շատ ժամանակ ղըլըղ մը կը կրէ, կը նստի իւր սրնգայ միայն վրայ՝ երկնցնելով միւսն, այնպէս որ անցորդը զայն մէկ ոտքով և մէկ սրունքով կը կարծէ։

Երբեմն խեղանդամ մը մեզմէ աւելի առողջ է։

Նէօյլի տօնավաճառին մէջ, պղնձեայ կոճակաւոր պատմուճան հագնող մուրացիկ մը կար, սա աթոռի մը վրայ նստած՝ սրունքը և կուրծքը ծածկած էր բրդէ մեծ ծածկոցով մը, որուն տակը կը պահէր իւր ձեռքերը։ Ծովային պատերազմ մը ներկայացնող մեծ նկար մը դրած էր իւր ոտքից վերայ.

« Տեա՛րք և տիկնայք, կըսէր անցորդաց, տեսէ՛ք ողորմելի անդամալոյծին աշխատութիւնը, որ ծովային մեծ պատերազմի մը մէջ վիրաւորուած է, իւր հայրենիքը պաշտպանելու պահուն։ »

Հակառակ՝ մեր կամաց, կը դիտէինք քիչմը տղայական երեցող այս պատկերը և կզգայինք սրտի անձկութիւն մը հասկնալով թէ այս ծովայինը, որ վիրաւորուած և խեղանդամ եղած է իւր հայրենիքը պաշտպանելով, վերջապէս հարկադրուած է մուրալ, ուստի ամեն անգամ առանց իւր պնակին մէջ քանի մը դրամ ձգելու՝ առջևէն չէինք անցներ։

Բայց վերջապէս, չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնիցի.

Ամրան իրիկուն մը ժամը 11 ին ատենները կը վերադառնայի ՚ի Նէօյլի, (կըսէ յօդուածագիրը) երբ ճանբուն վրայ հանդիպեցայ կոյտաւ մարդ մը՝ որ ծանր քայլերով կ՚ուղևորէր դէպի Փարիզ։ Պղնձեայ կոճակով պատմուճան մը հագած և մեծ կողով մը շալկած էր, այս կողովին մէջ ծովային մեծ պատերազմը ներկայացնող հռչակաւոր նկարը կար, որ բրդէ մեծ ծածկոցով մը փաթթուած էր զոր շատ անգամ տեսած էի վերոյիշեալ մուրացկին ծընգացը վրայ։

—Ըսէք ուրեմն, ո՛վ դիւցազն, ըսի, միթէ դուք չէ՞ք Բօրթ-Մայյօթի անդամալոյծը։

—Այո՛ պարոն, ես եմ.

—Սակայն այդ անդամալուծութիւնը զձեզ չըքալելէ չա՞րգիլեր։

—Երբէք, պարոն։

—Ըսել է որ դուք անդամալոյծ չէք.

—Այսպէսպէս ո՛չ.

—Բայց իբրև անդամալոյծ ինձմէ ողորմութիւն խընդրողը դուք չէի՞ք.

—Ներեցէք Պարոն, ես չեմ ըսած թէ անդամալոյծ եմ այլ ըսած եմ թէ՝ «տեսէ՛ք, ծովային մեծ պատերազմի մը մէջ իւր հայրենիքը պաշտպանելու առեն վիրաւորեալ խեղճ անդամալոյծի մը աշխատութիւնը.»

Կարծեմ հասկցուեցաւ թէ անդամալոյծը այս նկարին յօրինիչն էր,

—Եւ ինչո՞ւ ուրեմն ձեր սրունքները և կուրծքը Յուլիս ամսոյ մէջ ծածկած էիք.

—Այս ծածկոյթը կը ծառայէ իրիկունները նկարս ծածկելու և զայն անձրևէն պաշտպանելու համար, իսկ ցերեկը պէտք է որ զայն տեղ մը դնեմ, ուստի ծնկացս վրայ կը դնեմ.

Այժմ պիտի ըսէք թէ՝ այս խեղանդամը քաղկահնատ մէ։ Ես ալ համամիտ եմ ձեզ։ Բայց իւր քաղկահնատութիւնը պատժական օրինաց հարուածին տակ չիյնար, այն օրինաց որ չարգիլեր մէկը իր սրունքը բրդէ ծածկոյթով ծածկելու, ինչպէս նաև չարգիլեր [illegible] մէջ կանանց լաւ ու հաւաչիլը։

Ահաւասիկ փոքրիկ արհեստ մը՝ որով օրը 10 ֆրանք կրնայ շահուիլ, մինչև իսկ կան խեղանդամներ որք օրը 25 ֆրանք կը շահին.

(ՓԸԹԻԹ ՄՕՆԻԹԷՕՌ) Թարգմ.

Մ. Ա. Մ.

Մենք ալ աստ ի Պոլիս կը ճանչնանք մէկ ձեռքն ու ոտքը քաշուած կեղծող մուրացկան մը, որ երեք տուներու տէր ըլլալով, չորրորդ մը կանգնելու համար է անշուշտ որ տակաւին կը մուրա՛յ։

Բոժ.— Բան մըն է կերթայ՝ թող տուր որ երթա՛յ։

# ԾԱՂՐԱՔԱՂ

Գիւղացի մարդ մը, անցեալ օր գօմէտիօն խանը իւր բարեկամներէն մէկուն սենեակէն ներս մտնելով կըսէ։

—Ախպար, պու նէ՞ սըճագ, պուրտա տա հավա եօգ.

—Կայրը սէն տալֆ իտէրսին, պիզ պուրտա հէրիմիզ-տէ հավա իլէ կէչինիյօրուզ.

Երէկ իրիկուն Մեծ. Միհրան Էֆէնտի Անպարճեանէն ստացանք նամակ մը, որով 34րդ Նկարհանուկին ալ անսխալ կը կարդար՝ այսպէս.

« Պատուոյ սալը խողանակով եւ աճառով ալ չի մաքրուիր »

—Պրա՛վօ։

Թերթիս մէկ կողմը այն միջոցին տպագրուած ըլլալով, թէ 35րդ Նկարհանուկին և թէ Բոժոժիկի կարգ մը մեծ-խօսիկներու հետ ունեցած հաշիւը յաջորդ թերթով։

## ԱՅԳ

Վաղ ընդ փոյթ հրատարակելի․

Պարոն Գ. Առաւ-փախաւեանի իւր վաճառականին ունեցած պարտքը չի հատուցանելու համար խղճի հանդարտութեամբ պատրաստելու վրայ եղած սնանկութեան տեղրակը։

Պարոն և տիկին Մուհապէթճիզեանի միաձայն հաւանութեամբ մէջերնին տեղի ունենալիք պատերազմին պատմութիւնը։

Հանդիսականաց անպտուղ երգեր սորվեցնելու համար թատերաբեմին վրայ երեւիլ պատրաստուող հռչակաւոր երգչուհւոյ մը ազդարարութիւնը։

Նախ քան զպսակ ամուսնացեալ Ձ. և Փ., անոնց երկու նշանածներու չքեղ հալածանաց փայլո՞ւն նկարագիրը։

Վոսքորի գեղազուարճ ափունքներէն չի հեռանալու համար սատմաքսի տկարութիւն ունիմ ըսող՝ բայց մէկ նստելուն քօնլէճեան փօլօռէքին երեք հատը մէկանց մարսող գաւառական առաջնորդութենէ խոյս տուողի մը պատճառաբանեալ հրաժարականը։

Այս ամենքը վաղ ընդ փոյթ հրատարակելի են ի լրագիրս։

---

Հետեւեալը Գարէ-աղաճի զբօսավայրէն գտնուած է.

Պառօն Անտիռեաս Նառսէնկեան

« Տուն խըռեաճէւէն ելտեն նէ՝ ես ալ խայեւէն ելտեմ, ես խաոքօյսի խռեայ եմ, խայի մէջ գնաղ, խայի հետ ապռաղ, խաոքօյսի խայի քուռը իմ քուռս է, մառը իմ մառս է ամա հառը իմ ախպառս է։ Տըռասինիս ըլլուխը սաւի նէ ըր ղաղեմ, ըրախ մը ունենայ նէ մէջը ըր նետուիմ. իշմէ ատ տառ ես խայը ըր սիռեմ։ Հիմա քեզի սա պիտոռ ըսեմ քի՝ էյէռ օռ մէյմին ալ լեռը պըրտաղ տեննիս ինզի հառֆ նետես մէ եախոտ ըրամիտես նէ՝ ախպօռս պիտի ըսեմ, ըրտռիճ էս նէ՝ ատանկ պանեռ ընելու չես ։ Իմին խառռառս խառռառ է, ռռթըլս խոդս չէ. աս չափ խօսքս ալ էվէլ է ․

Օհանէս Էպէ-Բէյեան Մօշեանչ
Ինքը զուրցեց ես գրեցի
Պախալ Կիրակոս Վանցի

---

## ՓԷՆՆԷ

### ԱՍՄԱ ԵԱՓՐԱՂԸՆ ՖԱՅՏԷՍԻ

Ասմա եափրաղը սօլմատան պաշգա պիր շէյէ եարամազ օլտուղընըն զաննընտա իքէն, մէկէր իսէ բէք պէօյիւք ֆայտէլէրի վար ըմըշ. շէօյլէ քի, հէր կիւն ասմա եափրաղընըն իւչ տէօրտ տանէսինի պաշըա վէյա իւզէրէք ֆէսի իւզէրինէ գօյուլտուղտա փաֆայա բէք կիւզէլ ֆայտալար վէրիր․ պիրինճիսի, ասմա եափրաղը պաշը չօք սէրին թութար, սանքի յէն հարարէթի քէսէր, վէ իքինճիսի հէր տիւրլիւ պաշ աղրըլարընա մանի օլուր, պու թէրթիպ գուլլանըլտըղտա՝ արթըգ պիր թագըմ միւսիւլէրին պաշլարընը սէրին թութմագ էֆքեարըյլա ֆէսլէրինի տէլմէլէրինէ հիչ լիւզում գալմազ, թէճրիւպէ պու սէօյլէտիւքլէրիմիզի թաստիք իտէճէք տիր․ Լաքին պէտէնինտէ մէյճուտ օլան հարարէթի սէօնտիւրէ իչիւ թութմուշ ինտիխարլարա էլվէրիշլի տէյիլտիր տիր․ զիրա պու միւսիւլլէր իսթիխտար օլան զաթլըն պաշընը ըսըթմագ լազըմ տըր, ասմա եափրաղը իսէ սօղուտուր, հէլէ կէնճլէր վէ չօճուքլար վէ գանլարը սըճագ գատընլար հէր կիւն պաշլարընտան թագէ ասմա եափրաղընը էքսիք իթմէմէլի տիր․

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ
ԳՐՊԱՆԻ
ԲԱՌԱՐԱՆ
ԲԱՌ 25,000
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Այս Ֆրանսահայ Գրպանի Բառարանս հակառակ իւր փոքր ծաւալին ու համեստ գնոյն կը պարունակէ գրեթէ մեծ բառագրոց չափ բառ եւ ոճ։ Անձուկ միջոցի մէջ հեղինակն յաջողած է յաճախ զետեղել աշխարհաբառ բառերուն և ոճերուն քով գրաբառ համանիշներն ալ որք անհրաժեշտ են մատենագրական գործոց թարգմանիչներուն. Ի հարկին բառերուն տաճկերէններն ալ գրուած են որպէս և անվանման տրամադրութիւնք։ Այս նիւթական ու բարոյական առաւելութիւններէ զատ կարեւոր թերի մ'ալ կը լնու Գրպանի Բառագիրքս, որուն կցուած է պատմական, աշխարհագրական ու դիցաբանական անուանց բառարան մը։ Բառագիտութիւն փինացրեալ հաստուած մ'ալ ուր համառօտիւ կ'աւանդուին բառակազմութեան կանոնք, նպակաւոր գործ մը կը կացուցանէ Գրպանի Ֆրանսահայ Բառագիրքը՝ կազմեալ Անգլիական հաստատուն կազմով․



ՖԼՕՐԻՕ ԵՒ ՌՕՊԱԹԹԻՆՕ

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԱԿԱՆ

[illegible]

Ամէն Երկուշաբթի Կ. Պոլսէն կը մեկնի ի Մարսիլիա, հանդիպելով Տարտանէլ, Զմիւռնիա, Փիրէ, Պիրէօն, Քաթանիա Մէսինա, Բալերմօ. Նաբոլի, Լիվօռնօ և Ճէնովա (Սոյն շոգենաւը երկու շաբաթը անգամ մը միայն Զմիւռնիա և Փիրէ չի հանդիպելով Սելանիկի ճամբով կը մեկնի : )

Ամէն Երկուշաբթի Սուլինա, Կալաց և Իպրայիլ :

Ամէն Չորեքշաբթի Պրինտիզի, Պար. Անքօնա, Վենետիկ և Թրիեստէ : Ամէն Հինգշաբթի ուղղակի յՕտեսա :

Երկուշաբաթը անգամ մը Եշ. օրեր Սամսոն, Տրապիզոն Պաթում:

Դիւրութիւն և հաստատութիւն կը տրուի ուղևորաց : Չափաւոր գին;

Օրինաւոր գներով փոխադրութիւն կընդունի Եւրոպ. երկիրներու համար:

Դիմել առ Պօլսոյ մասնաճիւղն Պանքէ փողոց թիւ 59

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ

Չագմագճըլար եօգուշ Սոգա չէշմէի դէմ 56

Ֆռանսերէն քերական, հայերէն բացատրութեամբ . . . . 60 բարա.
Գործնական նոր քերականութիւն ֆրանսերէն լեզուի . . . 7 Դհկն,
Բարիզեան արձագանգ . 10 »
Ինքնապաշտպանութիւն . 6 »
Ուղևորութիւն շուրջ զլուսնով 8 »
Համառօտ նոր քերականութիւն 3 »
Ֆրանս. պարզ քերական 100 հատը 10 »
Մանկանց բժիշկը . . . 60 բր.



ՏԷՐ - ԽՄԲԱԳԻՐ
ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿ.
معارف نظارت جليله‌سنك رخصتنامه‌سيله طبع اولنمشدر




Թէ՝ « մեռցուցէ՛ք զիս, բայց գթացէ՛ք, ո՛հ, գթացէ՛ք իմ աղջկանս, գթացէ՛ք նաև աղդատոհմիս . . . մեռցուցէ՛ք զիս, զի լաւ է գերեզման քան նախատինք, լաւ է գլուխս չունենալ՝ քան աղտոտ դրոշմեալ ճակատ մը . . :» Տա՛մ ձեզի եւ ալ ուրիշներուն տուած անունը, ի՛նչ կը կարծէք, քրիստոնեայ մը, կամ կամ իշխանազուն մը գլխատեալ չի՛ համարուիր երբ իրմէ գլխուն անդ պատիւը կը յափշտակեն, պատասխանեցէ՛ք ինձ. ահա այս խօսքերը ձեզի պիտի բացատրէի՝ եթէ այն իրիկունը Եկեղեցւոյ դմբեթին տակ արիւնաթաթաւ դագաղիս մէջ պեղարդ ճակտիս համբոյր մատուցանող որբափայլ Տիանս, առարինի աղջիկս անաղարտ մնար . . : Արդ, քանի որ ամեն բան լմնցած է, չեկայ հոս աղջիկս ուզելու, և քանի որ պատիւս չի մնաց, ալ ընտանիք չունի՛մ, աղջիկս կուզէ զձեզ կոյր սիրով մը սիրէ կուզէ չի սիրէ. պէտք չէ՛ ինծի մեղկացեալ աղջիկ մը, թող ձերն ըլլայ, ես հաստատ միտքս դրած եմ ամեն հանդէսներու մէջ գալ և զձեզ հանգստում չի թողուլ, և մինչև այն ժամը՝ յորում պիտի տեսնեմ ուրիշ հայր, եղբայր կամ ամուսին մը որ



մեր նախատանաց վրէժը ձեզմէ պիտի լուծէ, ես կըսեմ, դէմքս դունատ՝ ձեր ամեն խընճոյքներու մէջ պիտի գամ կրկնել թէ՝ «դէշ ըրիք, վատութեամբ վարուեցաք.» այո՛, ուզէք չուզէք մտիկ պիտի ընէք և ձեր ամօթալից կրակոտ ճակատը պիտի խոնարհեցնէք մինչև որ խօսքս վերջացնեմ: Այն ատեն վրէժխնդիր ձայնս կտրելու համար՝ դարձեալ զիս դահճին պիտի ուզէք յանձնել, բայց ո՛չ, չի պիտի յանդգնիք այդ բանը ընելու, վախնալով որ երկրորդ օրը ուրուականս դեմերնիդ կելնէ և միևնոյն խօսքերը կը կրկնէ :

Ֆրան. (Զայրացեալ) Այդ աստիճան յանդգնութիւն և յնորմո՛ւնք իմ դիմացս . . . դո՛ւքս, ձերբակալեցէ՛ք սա մարդը.

Թուիպ. — Խեղճ մարդուն խելքին է եկեր տէր արքայ, (Սէն-Վալիէի) անանկ չէ՞ .

Սէն-Վալիէ. — Ա՛հ, անիծեա՛լ ըլլան անոնք՝ որ վատութեամբ կը գործեն և օրհասական առիւծի մը վրայ իրենց ժանտ շունչը կարձկեն: (Առ Թուիպօլէ) Իսկ դու, ո՛վ ոք և իցես, դու ծառայ վատ և իժաթոյն լեզու, դու որ հօր մը վիրաւոր սրտին ցաւերը կը ծաղրես, անիծեա՛լ, յաւիտեան անիծեա՛լ ըլլաս . . . :(Պօղոսին Բ.) Իմ իրաւունքս էր

# ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ**
Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000 · Պահեստի դրամ 6,243,127 Հասոյթ 1887 Տարւոյ 1,932,320

**ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ**
Դրամագլուխ Անգլ. Ոսկի 3,000,000 · Պահեստի դրամ 3,421,200 Հասոյթ 1887 Տարւոյ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար գիրենք ներկայացնել, նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուժած վնասնին 15.000 000 Անգլիական Ոսկին կանցնի.

# ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Անգլ. Ոսկի 5.000,000 "**ՄԱՐԻԹԱՅՄ**", պահեստի դրամ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիոն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Ց, ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց.


— 32 —

պատուաւոր ընդունելութիւն մը գտնել (Ա— Ցե——) ձեր կողմանէ, վասն զի թագաւոր մ'էք դուք, իսկ ես հայր մ'եմ, և ալեւոր տարիք մը արժանի՛ է յարգանաց . . . Երկուքնիս ալ մեր ճակտին վրայ մէկ մէկ թագ կը կրենք, ձերը ոսկեհուռն շուշան է, իսկ իմս՝ ձիւնափայլ մազեր։ Արդ տէր արքայ, օրբագիղծ մը, որ ձեր թագը արհամարհել յանդգնած ատեն դուք ինքնին կառնէք անոր վրէժը, գիտցէք թէ իմինս վրէժառուն ալ Աստուած է միայն։

ՋԳԻ ՎԱՐՅԳՈՑՐՆ



— 29 —

Աստուա՛ծ իմ, դատաւորդ արդար, արդեօք ի՞նչ ըսիր ի բարձանց, երբ տեսար միւնոյն բեմին վրայ ցեխի մէջ թաւալեալ տխուր և չիլ աչքերը մէջէ մէջ անցած, այն արիւնաթաթաւ աղտեղի արքունական մեղկութիւնը՝ որ կեղծ գթութեամբ զառնազգեստեալ էր. Ո՛հ, իշխանդ վեհազուն, դէշ գործ գործեցիր, հոդ չէ՛ր, եթէ ալեւորի մը արեամբը գետնին քարերը կարմրէին, դուցէ այս պատկառելի ծերունին սպարապետաց կարգէն ըլլալովը արժանի ըլլար այդ պատժոյն, բայց երբ իրեն տեղ անոր զաւակը, երկչոտ խեղճ աղջիկը ոտքերնուդ տակ յաղթահարեցիք, որուն աչքերը արտասուօք և սիրտը սարսափով լեցուած էր, ամբարշտութիւն մը գործած եղաք, որոյ համար պատասխանատու էք առաջի Աստուծոյ . . . Ձեր իրաւանց չափը անցունելով անցուցիք, հայրը կրնար ձերը ըլլալ, բայց աղջիկը՝ երբէ՛ք, ի դուք որ ներեցիք ինձ, միթէ շնո՞րհք մը կը համարիք, և ես անոր փոխարէն ապերախտութի՞ւն մը ըրած կըլլամ . . . Փոխանակ աղջիկս աղարտելու, չէի՞ք կրնար գտնուած բանտս գալ գլխատանել, այն ատեն պիտի գոչէի ձեր երեսին